711 Ցնծա՛ հոգիս, ցնծա՛, Հիսուսն է գալիս,

1. Ցնծա՛ հոգիս, ցնծա՛, Հիսուսն է գալիս,
Ցնծա՛ հոգիս, ցնծա՛, քեզ կյանք է տալիս,
Ցնծա՛ հոգիս, ցնծա՛, քո Տերն է գալիս,
Հողեղեն մարմնիդ նոր կյանք է տալիս:

2. Ցնծա՛ հոգիս, ցնծա՛, Հիսուսն է գալիս,
Ցնծալով՝ Իր հոտին ողջույն է տալիս:
Խնդրեցե՛ք միաձայն աշխարհի համար,
Չէ՞ որ արյունն հեղեց բոլորի համար:

3. Ցնծա՛ երկիր և քո մեջ բնակվողներ,
Ցնծացե՛ք, Հիսուսի տանջված գառնուկներ,
Ցնծալով երգեցեք, գնում ենք հավետ
Մեր հետևում թողած դժոխքն առհավետ:

4. Ցնծա՛ հոգիս, ցնծա՛, Հիսուսն է գալիս,
Բայց ամբարիշտները դարձի չեն գալիս,
Կխնդրեն լեռներին՝ ընկե՛ք մեզ վրա,
Բարկության այդ ժամին ո՞վ կդիմանա: